Տարածվում է անվճար

♦ «Ձայն»
**վերլուծական տեղեկատվական լրատու**
նպատակ ունի բարձրացնել Հայաստանում սոցիալ-տնտեսական զարգացումների շուրջ հասարակության իրազեկության աստիճանը,

♦ **լուսաբանել**
իրականացվող հանրային քաղաքականությունները և հիմքեր ստեղծել դրանց հասարակական մոնիտորինգի և մասնակցության համար:

♦ **Ձայնը հրատարակվում է «Օքսֆամ»**
բրիտանական կազմակերպության Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող «Բյուջետային վերլուծություններ» ծրագրի շրջանակներում:

♦ **Ծրագիրը իրականացնում է Տնտեսական զարգացման հետազոտությունների կենտրոն**
ոչ-առևտրային, ոչ-քաղաքական կազմակերպությունը:



# Ձայն

♦ ՀԱՄԱՐ 9 ♦ ԱՊՐԻԼ, 2005
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

## ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Հայաստանը ներկայացրեց իր հայտը ԱՄՆ-ի «Հազարամյակի Մարտահրավերներ» հիմնադրամին

Մարտի վերջին կառավարությունը վերջնականապես ավարտեց և ԱՄՆ կառավարությանը ներկայացրեց իր հայտը ԱՄՆ «Հազարամյակի Մարտահրավերներ» ծրագրից Հայաստանի համար ֆինանսավորում ստանալու համար: Հիշեցնենք, որ 2004 թվականի վերջին Հայաստանը նման մի փորձ արդեն արել էր, բայց այդ ժամանակ ներկայացված առաջարկությունը հետ էր ուղարկվել անիրատեսականորեն մեծ լինելու պատճառով: Այն ժամանակ Հայաստանը ներկայացրել էր մոտ 900 միլիոն ԱՄՆ դոլարի ծրագրեր: Այս անգամ, մեր կառավարությունը պահանջում է միայն 175 միլիոն ԱՄՆ դոլարի օգնություն, որից 118 միլիոն դոլարը պետք է ուղղվի ոռոգման համակարգի զարգացմանը, իսկ 57 միլիոնը՝ գյուղական ճանապարհների վերականգնմանը: Ոռոգման վերականգնման ծրագրով նախատեսված է, որ նախկինում անջրդի որոշ հողեր կդառնան ոռոգելի, ինչպես նաև պոմպակայաններով աշխատող ոռոգման համակարգը կփոխարինվի ինքնահոս համակարգով, որի արդյունքում կփոքրանա էլեկտրականության սպառումը և զգալիորեն կիջնի ոռոգման սակագինը:

### Կառավարությունը նորից չկարողացավ հաշվիչ դրամարկղային մեքենաներ «պարտադրել» տոնավաճառների առևտրականներին

Այս տարվա մարտին Կառավարությունը ևս մեկ անգամ փորձեց տոնավաճառներում աշխատող առևտրականներին պարտադրել հաշվիչ դրամարկղային մեքենաներ: Նշենք, որ կառավարությունը նման փորձեր անում է դեռևս 2001 թվականից, բայց ամեն անգամ ստիպված է հետաձգել այն՝ հաշվի առնելով առևտրականների դժգոհությունները: Խնդիրը կայանում է նրանում, որ նորմալ հարկային մշակույթի ձևավորումը հնարավոր չէ առանց այդ մեքենաների կիրառման: Կառավարությունը մինչ այժմ կարողացել է պարտադրել այդ մեքենաները բիզնեսի գրեթե բոլոր տեսակներին: Միակ ոլորտը, որտեղ կառավարությունը մշտապես ձախողվում է, դա տոնավաճառներն են: Այստեղ կարող է լինել երկու բացատրություն: Նախ, տոնավաճառների առևտրականները բավականաչափ միասնական են, և կարողանում են ակտիվ բողոքներ կազմակերպելու տարբերակով «ահաբեկել» կառավարությանը: Եվ երկրորդ, Հայաստանում կան ընդամենը մի քանի խոշոր տոնավաճառներ, որոնց տերերը բավականին ազդեցիկ և հայտնի մարդիկ են, իսկ շատերը նույնիսկ ներկայացված են Ազգային Ժողովում:

# Հանրային ծառայություններ և Սակագնային Քաղաքականություն

## Ի՞նչ են հանրային ծառայությունները

Կա ապրանքների կամ թերևս ծառայությունների որոշակի խումբ, որոնք կարծես թե դիտարկվում են առանձին մյուսներից: Դա, այսպես կոչված, հանրային ծառայություններն են, այսինքն, էլեկտրաէներգիան, գազը, հեռահաղորդակցությունը, խմելու ջուրը, կոյուղին և ոռոգումը: Կան մի շարք լուրջ պատճառներ, որ այս ոլորտները առանձնացնում են մյուսներից:

Նախ և առաջ այս ոլորտները համարվում են բնական մենաշնորհներ, որը նշանակում է, որ մենք չենք կարող հույս ունենալ, որ առանց կողմնակի միջամտության այդ մենաշնորհային կազմակերպությունները մեզ՝ սպառողներիս, կառաջարկեն արդարացված գներ: Իսկ բնական են այդ մենաշնորհները այն պատճառով, որ ենթադրվում է, որ այդ ոլորտներում պետք է գործի մեկ կազմակերպություն: Օրինակ, պատկերացրեք, նույն տարածքում գործեին էլեկտրաէներգիա վաճառող երեք կազմակերպություն և յուրաքանչյուրը ունենար իր բաշխիչ ցանցերը: Դա կլիներ տնտեսապես անարդյունավետ: Դրա համար էլ նպատակահարմար է համարվում ունենալ մեկ կազմակերպություն, բայց միևնույն ժամանակ սահմանել հասարակական կամ պետական վերահսկողություն դրա նկատմամբ: Այդ պատճառով էլ, հասարակությունը պարտադրում է իրենց երկրի կառավարություններին, դիտարկել այդ ծառայությունները որպես առանձնահատուկ ոլորտ և չթողնել շուկայի հույսին: Այս պարագայում այնքան էլ կարևոր չէ տվյալ կազմակերպության սեփականության ձևը, քանի որ անկախ սեփականության ձևից ոլորտը գտնվում է պետական բավականին լուրջ վերահսկողության տակ: Դա է պատճառը, որ սպառողների համար ամենակարևոր գործոնի՝ գնի հարցը իրականում կարող է կախված չլինել սեփականության ձևից: Օրինակ, Հայաստանի բաշխիչ ցանցերը սեփականաշնորհվել են 2002 թվականին, բայց էլեկտրաէներգիայի գները վերջին անգամ բարձրացել են 1999 թվականին (18 դրամից հասնելով 25 դրամի):

## Պետական սուբսիդիաները

Երբ խոսում ենք հանրային ծառայությունների մասին, անկախ մեզանից շոշափվում է նաև պետական սուբսիդիաների հարցը: Խնդիրը կայանում է նրանում, որ շատ երկրներում հանրային ծառայությունների սակագները ցածր պահելու համար այդ երկրների կառավարությունները այդ ծառայությունները մատուցող կազմակերպություններին տալիս են սուբսիդիաներ, որը ծածկում է ցածր սակագների արդյունքում առաջացող վնասները: Ճիշտ է դա թե սխալ, տվյալ երկրի հասարակության որոշելիք հարցն է, քանի որ այդ բյուջետային միջոցները գոյանում են իրենց վճարած հարկերից և հասարակության մեծամասնությունը կարող է որոշել, որ ավելի նպատակահարմար է բանակի կամ կրթության վրա կատարվող ծախսերի ավելացման փոխարեն գումարներ տրամադրվի ջրամատակարարման կազմակերպությանը, որպեսզի խմելու ջրի վարձը շատ բարձր չլինի:

Ամեն երկիր և հասարակություն ինքն է որոշում կայացնում, թե արդյո՞ք նպատակահարմար է ցածր սակագներ ունենալու համար պետական բյուջեի միջոցներն ուղղել այդ ոլորտներին: Հայաստանում երկար տարիներ պետական բյուջեից սուբսիդիաներ է տրամադրվել հանրային ծառայություններ մատուցող ոլորտներին, մասնավորապես, էլեկտրաէներգիայի արտադրության, բաշխման, խմելու ջրի, ոռոգման ջրի ոլորտներին: Մեր հասարակությունը միշտ էլ դեմ է եղել բարձր սակագներին, որը նշանակում է, որ նրանք անուղղակիորեն կողմ են իրենց վճարած հարկերից սուբսիդիաների տրամադրմանը: Միգուցե բնակչությունը վստահ չի, որ բյուջետային սուբսիդիաների հատկացման դադարեցման դեպքում պետությունը ազատված բյուջետային միջոցները կօգտագործի իրենց համար կարևոր այլ խնդիրների լուծման համար:

Ամփոփելով նշենք՝ որ պետությունը կարգավորում է հանրային ծառայությունների ոլորտը, քանի որ մտավախություն կա, որ այդ ծառայությունները մատուցող կազմակերպությունները կարող են չարդարացված բարձր գներ սահմանել՝ չարաշահելով իրենց մենաշնորհային դիրքը: Մյուս կողմից պետությունը կարող է բյուջետային հատկացումներ անել այդ կազմակերպություններին, որպեսզի դրանք ավելի ցածր գներով իրականացնեն այդ ծառայությունների մատուցումը:

## Ի՞նչ սակագներ կան Հայաստանում և ի՞նչպես են դրանք ձևավորվում

### Էլեկտրաէներգիա

Էլեկտրաէներգիայի սակագինը վերջին անգամ բարձրացվել է 1999 թվականին և արդեն 6 տարի է մնում է անփոփոխ: Անկախության տարիներին էլեկտրաէներգիայի ոլորտից միշտ անբաժան են եղել խոշոր կորուստները և դրա համար էլ շատ է խոսվել այդ կորուստների ծածկման համար սակագների բարձրացման անհրաժեշտության մասին: Բայց վերջին տարիների փորձը ցույց տվեց, որ հնարավոր էր վերացնել համակարգի ֆինանսական դժվարությունները առանց պաշտոնական սակագների բարձրացման: Էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերի սեփականաշնորհումից հետո սակագների բարձրացում տեղի չունեցավ, իսկ կազմակերպության ֆինանսական վիճակը շարունակաբար լավանում է:

Ի՞նչ տեղի ունեցավ: Մի երկու բառով դա կարելի է բնութագրել որպես «պաշտոնական սակագների անփոփոխության պայմաններում կորուստների կրճատում փաստացի սակագների բարձրացման միջոցով»: Այսինքն մինչև սեփականաշնորհումը սպառողների համար եղել է երկու սակագին, մեկը՝ պաշտոնական, իսկ մյուսը՝ փաստացի, այսինքն այն ցածր սակագինը, որը սպառողը վճարել է՝ գործարքի մեջ մտնելով թաղային էլեկտրիկների հետ: Մի քանի տարի առաջ շատ էր տարածված այսպես ասած «15 դրամով» էլեկտրիկների հետ պայմանավորվածություն ձեռք բերելը, որի արդյունքում համակարգը կրում էր իսկական վնաս-

*Շար. հաջորդ էջում*

*Սկիզբը՝ նախորդ էջում*

ներ: Եթե կառավարությունը բարձրացներ սակագները, ապա դրանով նա կստիպեր բարեխիղճ վճարողներին ավելի շատ վճարել: Կառավարությունը սակայն որոշեց սեփականաշնորհել վնասաբեր և ոտից գլուխ կոռումպացված այդ կազմակերպությունը, որպեսզի սեփականատերը ինքը լուծի այդ հարցերը: Արդյունքում մենք ունենք շահութաբեր բաշխիչ ցանցեր, նույն պաշտոնական սակագինը, չնայած շատերի համար, ովքեր նախկինում գործարքների մեջ են եղել, իսկ հիմա արդեն չեն կարող, փաստացի սակագինը բարձրացել է և հասել պաշտոնական սակագնին: Չենք կարծում, որ դրա արդյունքում աղքատությունն աճած լինի, քանի որ էլեկտրիկների հետ պայմանավորվածություն ունեցողները և քիչ վճարողները եղել են նրանք, ովքեր ունեցել են էլեկտրականության մեծ սպառում, հետևաբար չեն եղել ծայրահեղ աղքատ:

Ներկայումս Հայաստանում էլեկտրաէներգիայի գինը համեմատաբար էժան է, որը պայմանավորված է ատոմակայանի առկայությամբ: Ատոմակայանը կարևոր է ոչ այնքան էլեկտրաէներգիայի արտադրությամբ, այլ էժան էներգիայի արտադրությամբ, քանի որ Հայաստանն առանց ատոմակայանի էլ խնդիրներ չունի էլեկտրաէներգիայի արտադրության հետ, բայց առանց ատոմակայանի, էլեկտրաէներգիան կլիներ բավականին թանկ: Շատ մոտավոր հաշվարկներով, ատոմակայանի բացակայության դեպքում Հայաստանում էլեկտրաէներգիան կարժենար մոտ հինգ դրամով թանկ:

Շատ մոտավոր հաշվարկներով, Հայաստանում էլեկտրականությունն առաջիկա տաս տարիների ընթացքում կարող է հասնել մինչև 8-9 ցենտի, որը այսօրվա գներով համարժեք է մոտ 40 դրամի: Դրությունը չի կարող փրկել նույնիսկ նոր ատոմակայանի կառուցումը, քանի որ, եթե ներկայիս ատոմակայանը Հայաստանին ապահովում է հարաբերական էներգետիկ անվտանգություն և էժան էլեկտրաէներգիա, ապա ապագայի ատոմակայանը Հայաստանին կարող է ապահովել միայն էներգետիկ անվտանգություն, իսկ արտադրված էլեկտրաէներգիայի գինը կլինի բավականին բարձր, քանի որ ժամանակակից ատոմակայաններին ներկայացվող անվտանգության պահանջները այնպիսին են, որ պետք է հսկայական գումարներ ծախսվեն դրանց վրա, որն էլ բարձրացնում է էլեկտրաէներգիայի ինքնարժեքը: Այսինքն մենք ունենք մի հին ու էժան ատոմակայան, որից բավականին մեծ ռիսկով ստանում ենք էժան էլեկտրաէներգիա, բայց հենց այդ ատոմակայանը վերջնականապես մաշվեց, մենք չենք կարող այն փոխարինել մեկ այլ էժան ատոմակայանով, քանի որ աշխարհում էժան ատոմակայաններ գոյություն չունեն: Էլեկտրաէներգիայի գների բարձրացմանը կնպաստի նաև ԱՊՀ-ում միջպետական տնտեսական հարաբերությունների շարունակվող անկումը, որի արդյունքում ակնկալվում է, որ Ռուսաստանը կբարձրացնի ԱՊՀ երկրներին իր կողմից մատակարարվող գազի սակագները:

Այսպիսով, ամփոփենք, որ էլեկտրաէներգիայի գնի վրա ազդող ամենակարևոր գործոնը հանդիսանում է ատոմակայանի առկայությունը, որը նվազեցնում է Հայաստանում արտադրվող էլեկտրաէներգիայի միջին ինքնարժեքը: Նախկինում պետությունը տրամադրում էր սուբսիդիաներ սակագները ցածր պահելու համար, բայց բաշխիչ ցանցերի սեփականաշնորհումից հետո այդ սուբսիդիաները աստիճանաբար վերացվեցին, որը սակայն չազդեց սակագների վրա, քանի որ ցանցերի նոր սեփականատերը կարողացավ վերացնել հսկայական չափերի հասնող գողությունները և յուրացումները: Ցածր սակագների պահպանմանը նպաստեց և առաջիկայում շարունակելու է նպաստել նաև հայկական դրամի արժեքավորումը, որը սկսվեց 2004 թվականի սկզբին: Բանն այն է, որ ներմուծվող ամբողջ վառելիքը (միջուկային վառելիք և գազ) գնանշվում է ԱՄՆ դոլարով, որի արդյունքում ներմուծված վառելիք օգտագործող կազմակերպությունները բավականին շահում են:

## Գազ

Գազի սակագնի որոշման ամենակարևոր գործոնը ոչ թե տնտեսական, այլ քաղաքական բնույթի է: Բանն այն է, որ գազի տեղական սակագները անմիջականորեն կախված են նրանից, թե Հայաստանը ինչ գնով է այն ձեռք բերում այլ երկրներից, իսկ դա այս պահի դրությամբ ոչ այնքան տնտեսական, ինչքան քաղաքական խնդիր է: Այսօր մենք գազը ձեռք ենք բերում Ռուսաստանից, որը մեզ այն վաճառում է մոտ 55 դոլարով (1000 խոր. մետրի դիմաց): Իսկ գազի միջազգային գինը այսօր կազմում է 80 ԱՄՆ դոլար: Ռուսաստանը էժան գազ վաճառում է ոչ միայն Հայաստանին, այլ նաև ԱՊՀ մյուս երկրներին, ներառյալ Ադրբեջանին: Վերջերս Ռուսաստանը սկսել է այդ հարցն օգտագործել քաղաքական նպատակներով և ակնկալվում է, որ այն կարող է բարձրացնել «անհնազանդ» երկրներին մատակարարվող գազի գինը, ինչպես դա նախատեսվում է անել Մոլդովայի դեպքում:

Ինչևէ, մեր սպառողին գազը հասնում է 50 դրամով, որը, մինչև վերջերս կազմում էր 1000 խոր. մետրի դիմաց մոտ 90 ԱՄՆ դոլար: Ներմուծման և սպառողին վաճառվող գների տարբերությունը երկար ժամանակ կազմել է մոտ 35 ԱՄՆ դոլար, որը հազիվ է բավականացրել գազամատակարարման տեղական ծախսերը փակելու համար (ցանցերի պահպանում, աշխատավարձ, բնական կորուստների փոխհատուցում): Բայց հայկական դրամի փոխարժեքի արժեքավորման հետ կապված, ներմուծման և տեղում վաճառքի գնի տարբերությունը բավականին մեծացել է, և այն կազմում է արդեն մոտ 50 դոլար (նախկին 35-ի փոխարեն): Դրա արդյունքում համակարգը այսօր ստանում է ավելի շատ շահույթ քան նախկինում:

Շատ հետաքրքիր է նշել, որ եթե դրամ/դոլար փոխարժեքը մնա ներկայիս 460 դրամ մակարդակի վրա, իսկ Ռուսաստանը որոշի Հայաստանին վաճառվելիք գազի գինը բարձրացնել 10 դոլարով և այն մոտեցնել միջազգային գներին, ապա նույնիսկ այդ դեպքում հնարավոր կլինի խուսափել տեղական սակագնի, այսինքն մեկ խորանարդ մետրի դիմաց 50 դրամի, բարձրացումից: Այսինքն, փոխարժեքի արժեքավորման արդյունքում անուղղակիորեն մեծանում է Հայաստանի «անկախության» մակարդակը, քանի որ այդ դեպքում Հայաստանը պարտադրված չի լինի Ռուսաստանի կողմից գազի գնի մինչև 10 դոլարով բարձրացնելու դեպքում իր հերթին բարձրացնել բնակչությանը մատակարարվող գազի գինը:

Իսկ ընդհանուր առմամբ, մատակարարվող գազի գները ցածր պահելու արդյունքում, Ռուսաստանը Հայաստանին ցուցաբերում է տարեկան մոտ 40 միլիոն ԱՄՆ դոլարի անուղղակի «օգնություն»: Մյուս կողմից, դա չի կարելի պարզապես անվարձահատույց «լավություն» համարել, քանի որ, եթե Ռուսաստանը զգալիորեն բարձրացնի Հայաստանին տրամադրվող գազի գինը, ապա Հայաստանի համար իմաստ չի ունենա գազ ստանալ հեռավոր Ռուսաստանից, քանի որ գազի պաշարներով աշխարհում երկրորդ տեղը զբաղեցնող Իրանը հանդիսանում է Հայաստանի անմիջական հարևանը և հավասար գների դեպքում շատ ավելի տրամաբանական կլինի գազ ներմուծել Իրանից: Այսպիսով, ռուսական գազի ներկայիս ցածր գները Ռուսաստանին հնարավորություն են տալիս պահել հայկական (և ոչ միայն) շուկաները, քանի որ Ռուսաստանը տարածաշրջանում ունի լուրջ մրցակիցներ, ինչպիսին են Իրանը, Թուրքմենաստանը և ապագայում նաև Ադրբեջանը:

## Խմելու ջուր

Խմելու ջրի համակարգը երկար ժամանակ ստացել է պետական սուբիսիդիաներ, որոնք այնուամենայնիվ չեն բավականացրել համակարգի նորմալ գոյության համար: Սպառողը ուզում է որակյալ ջրամատակարարում, որը հնարավոր է ապահովել հսկայածավալ ներդրումների միջոցով միայն: Այդ ներդրումների հետ գնման համար անհրաժեշտ կլինի զգալիորեն բարձրացնել խմելու ջրի գինը, կամ ծախսերը փակել պետական բյուջեի միջոցներից: Մոտավոր հաշվարկներով, եթե Հայաստանի ամբողջ տարածքում ապահովվի որակյալ ջրամատակարարում և գները պահպանվեն ներկայիս մակարդակում, ապա կառավարությունը ստիպված կլինի յուրաքանչյուր տարի ծախսել մոտ 8-9 միլիարդ դրամ, որը հավասար է ընտանեկան նպաստների տարեկան գումարների մոտ կեսին:

Հասարակությունը պետք է ինքը որոշի, թե ինչն է իր համար գերակայություն: Կա հարցի երկու լուծում՝ համաձայնել բարձրացնել ջրի գինը մինչև մոտ 250 դրամի և ունենալ որակյալ ջրամատակարարում, կամ պարտադրել պետությանն իր հարկային եկամուտներից հսկայական բյուջետային միջոցներ հատկացնել ջրամատակարարման կազմակերպություններին, որպեսզի նրանք կարողանան, առանց սակագները բարձրացնելու, բարձրացնել ջրամատակարարման որակը:

## Ոռոգում

Սա այն բացառիկ ոլորտն է, որը շարունակում է ստանալ պետական սուբսիդիաներ, քանի որ առկա սակագները չեն բավականացնում ծախսերի փոխհատուցման համար: Բայց քանի որ ոռոգումը հանդիսանում է ոչ թե սպառողական ապրանք, այլ օգտագործվում է գյուղատնտեսական արտադրության մեջ, սակագների ցանկացած բարձրացում լուրջ բացասական ազդեցություն կունենա գյուղատնտեսության վրա: Այդ իսկ պատճառով վերջին մի քանի տարիների ընթացքում ոլորտի մասնագետներն անվերջանալի փնտրտուքի մեջ են, թե ինչպես դադարեցնեն պետական սուբսիդիաներն առանց բարձրացնելու ոռոգման սակագները:

Այստեղ լուծում կա. բանը նրանում է, որ ոռոգման համակարգը ներկայումս հիմնականում աշխատում է պոմպակայանների միջոցով, որի դեպքում ոռոգման ջրի ինքնարժեքը բավականին բարձր է ստացվում, քանի որ շատ մեծ են էլեկտրաէներգիայի ծախսերը: Այս էներգատար համակարգը մենք ժառանգել ենք Խորհրդային Միությունից, որը չի համապատասխանում Հայաստանի ներկայիս պայմաններին: Եթե կատարվեն մեծ ներդրումներ, ապա հնարավոր կլինի ոռոգման համակարգը վերափոխել և դարձնել ինքնահոս սկզբունքով և նվազագույն էներգատարությամբ աշխատող համակարգ: Այդ դեպքում հնարավոր կլինի ոչ միայն չբարձրացնել ոռոգման սակագինը, այլ նաև մի շարք տարածաշրջաններում այն զգալիորեն նվազեցնել և հասցնել այն փոխաբերական իմաստով «ջրի» գնի:

Փաստորեն որակյալ և էժան ոռոգում ունենալու համար կա ընդամենը մեկ լուծում՝ հսկայական ներդրումների միջոցով բարձրացնել ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը և փոքրացնել էլեկտրաէներգիայի ծախսը: Ներդրումների կարիքը բավականին մեծ է, առնվազն 200 միլիոն ԱՄՆ դոլար: Բայց դա այնքան էլ մեծ գումար չէ, եթե հաշվի առնենք այն մեծ խնայողությունները, որը հնարավոր կլինի ունենալ յուրաքանչյուր տարի՝ խնայելով էլեկտրաէներգիան: Դրա շնորհիվ հնարավոր կլինի մրցունակ դարձնել Հայաստանի գյուղատնտեսությունը, որն ինչպես հայտնի է, ներկայումս բավականին անարդյունավետ է:

## Ամփոփում

Այսպիսով, հիմնական հանրային ծառայությունների սակագների մասով ունենք բավական խառը պատկեր: **Էլեկտրաէներգիայի սակագնի** վրա ազդող հիմնական գործոնն ատոմակայանի առկայությունն է, և ակնհայտ է, որ երկարաժամկետ հատվածում պետք է տեղի ունենա էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացում: **Բնական գազի սակագնում** որոշիչ է այն հանգամանքը, թե ինչպիսին կլինի Ռուսաստանի քաղաքականությունն ԱՊՀ մյուս երկրների, մասնավորապես Հայաստանի նկատմամբ: Վատագույն տարբերակի դեպքում, երբ ստիպված լինենք գազը ներմուծել, միջազգային գազի գինը կբարձրանա ներկայիս 50 դրամի փոխարեն առավելագույնը 70 դրամի: **Խմելու ջրի** խնդիրը ավելի ցավոտ է. որակյալ ջրամատակարարումը պահանջում է մեծ ֆինանսավորում, որը պետք ապահովվի կամ ուղղակիորեն սպառողների միջոցների հաշվին, այսինքն բարձր սակագների միջոցով, կամ էլ պետական սուբսիդիաների միջոցով, որը պետք է վճարվի երկրի բյուջեից, այսինքն, վերջին հաշվով նույնպես բնակչության վճարած հարկային եկամուտներից: Ինչ վերաբերում է **ոռոգմանը,** ապա այստեղ ճիշտ կառավարման դեպքում հնարավոր է ոչ միայն չբարձրացնել սակագները, այլ որոշ չափով նաև նվազեցնել այն: Դրա համար անհրաժեշտ կլինի կատարել մեծ ներդրումներ և համակարգը տեղափոխել հիմնականում ինքնահոս սկզբունքով աշխատող համակարգի:

ՁԱՅՆ

**Հիմնադիր և հրատարակիչ**
«Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ

**Խմբագիր**
Ակսել Թևոսյան

**Թողարկման ղեկավար**
Սուշեղ Թումասյան

**Տպաքանակը**
4400 օրինակ:
Տարածվում է անվճար:

**Հասցե**
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 48
Հեռ./ֆաքս: (374 1) 540 289,
**www.edrc.am**
**dzayn@edrc.am**

**Ձայնը** հրատարկվում է **«Օքսֆամ»** ՄԲ աջակցությամբ:

Oxfam